

Եւ ծարաւուտ անապատի հրավառ  
Տատասկներում, արևի տակ բոցափայլ  
Փնդուում է նա նըրան անվերջ, անդադար  
Եւ մեռնում է վեհ սիրոյ մէջ հոգեզմայլ:

Եւ քնի մէջ՝ աննիւթական, անվախճան,  
Տեսնում է նա այնպէս քնքնւշ ու սիրուն  
Շողքը չքնաղ այն նազելի աղջկան  
Եւ փնդուում է նըրան յաւէրժ երազում...

Աւ. Իսահակեան

## Օ Բ Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը

Վ է Պ

Ռընէ Բազենի

(Թարգմանութիւն Փրանսերէնից)

I

Փետրուարի գիշերը Ալզասում.

Լուսինը բարձրացաւ Հոենոսի մէգերի վրայ: Այդ ժամին  
Վոժի լեռնային արահետով մի մարդ էր իջնում, մի յայտնի  
որսորդ՝ յայտնի շրջիկ, որից ոչինչ չէր խուսափում: Նա նկա-  
տեց լուսինը թաւուտ անտառակի բացուածքից, թէև անմիջա-  
պէս յետոյ մարդը ծածկուեց եղենիների ստուերում, բայց այդ  
մի հատիկ հայեացքը, որ ցանցառ ծառերի արանքից նա նե-  
տեց պայծառ գիշերուայ վրայ, բաւական եղաւ ըմբռնելու շըր-  
ջապատող բնութեան գեղեցկութիւնը: Համոյքի մի դող անցաւ  
ճանապարհորդի մարմնով: Եղանակը ցուքա էր և խաղաղ: Զո-  
րերից բարձրացող նօսր մառախուղը՝ ծաղիկների ու եղակի  
բուրմուճի փոխարէն տարածում էր ոետինի, թօնած տերե-  
ների, կանաչ խոտերի, ծառերից պլոկուած թարմ եղեների  
անսուշահոտութիւնը: Մառախուղի մէջ զգացւում էր նաև այն

յաւիտենական ծաղկի բուրմունքը, որի անունն է անտառային մամուռ։ Ճամբորդը լայն կրծքով շնչում էր իր սիրած այդ հոտը. տասը բայլ շարունակ՝ թերանաբաց նա կարծես խոշոր կումերով խմում էր այդ բուրմունքը. ինչքան և նա լաւ ծանօթ էր անտառի գիշերային այդպիսի հանդէսներին, այդ շողազարդ երկնքին, հողից բարձրացող այդ բուրմունքին, հայր կեանքի ցնծութեան ալդ թթիռներին, այնուամենայնիւ մեղմիւ բացազանչեց. «Կեցցես ձմեռ, կեցցես Վոժի լեռները. Կը ըանք չեն կարողացել ձեզ փշացնել» եւ յետոյ՝ կածանի աւազների ու եղենիների չոր փշերի վրայ աղմուկ չը հանելու համար, ձեռնափայտը թե՛ վրայ դրեց. ու յետ դառնալով բացազանչեց.

—Զգոյշ բայլիր, Ֆի՛դել, իմ հաւատարիմ բարեկամ. տես, որքան գեղեցիկ է:

Երեք քայլ հեռաւորութեան վրայ նրա յետեկից վազում էր իսպանական մի երկայնասրուն շոն, վտիտ կողերով և բարակի պէս սուր գնչով։ Նա թէև մոխրագոյն էր, բայց լոյսի առաջ ստանում էր կրակի կամ կաթնախառն սուրճի գոյն։ Փափուկ մազերի կախկխուած փնջերի տակից ծրագրում էին նրա ոտոները, փորը և պոչը։ Կենդանին կարծես հասկացաւ իր տիրոջ ասածը, և շարունակեց բայլել այնքան հանդարտ, որքան լուսինը, որ ասհում էր եղենիների կատարների վրայից։

Շուտով լոյսը թափանցեց ոստերի արանքը, փշրեց և տեղ-տեղ սրբեց տարաւ ստուերները, սողաց, ձգուեց զառիվայրերի վրայ, փարեց ծառերի բներին և շողերի կաթիներով զարդարեց նրանց, ապա սառն, յեղյեղուկ ու կապոյտ՝ ծառերից ստեղծեց մի նոր հրաշալի անտառ, որ անծանօթ էր ցերեկներին։ Տասը բոպէ բաւական եղաւ այս անհուն, դիւթական և արագ ստեղծագործութեան համար, որ բնութիւնը կանխաւ չայտնեց և ոչ մի թթիռով։ Ուլրիխ Բէհլերը շարունակեց իշնել, հետզհետէ աճող յուզմունքն բռնուած։ Նա մերթընդ մերթ կունում էր՝ ծառերի տակը լաւ տեսնելու համար. կամ սրտի թթիռով կախւում էր հեղեղաների վրայ, զգոյշ պահերով գլուխը՝ ինչպէս այծեանները, որոնք պատրաստում են թողնել ձորակը և վազել դէպի հովիտ։

Խանդավառ և հոգով երիտասարդ այս ճանապարհորդը, սակայն էլ ջահիլ չէր։ Ուլրիխ Բէհլերը, կամ Ուլրիխը, ինչպէս նրան պարզապէս անուանում էին այդ կողմերում, վաթսուն տարեկան էր. այդ երևում էր նաև նրա ալեխառն մազերից ու միրուքից։ Բայց նա երկի անցեալում երիտասարդութեան աւելի մեծ կորով էր ունեցել քան ուրիշները, այնպէ։

ինչպէս մէկն աւելի քաջութիւն, միւսն աւելի գեղեցկութիւն է ունենում: Եւ այդ ունեցած երիտասարդութիւնից նա դեռ մի բան պահում էր: Նա բնակուում էր Սէնտ-Օդիլ լեռան կրծքին, ուղիղ չորս հարիւր մետր բարձրութեան վրայ: Եւ տնկուած էր անտառի մէջ նրա անարուեստ տնակը առանց մի կտոր հողի ու առանց պարտիզի, եթէ չաշուենք այն փոքրիկ գետինը, ուր հաստատուած էր շէնքը և յեսեի այն փոքրիկ ծառաստանը, որ խիստ ձմեռները աւերում էին պարբերաբար: Հայրը գնել էր այս տունը միմիայն արձակուրդներն այնտեղ անցկացնելու համար, իսկ որդին՝ Ռւլրիխը, ժառանգելով այն, մընաց նրան հաւատարիմ և այնտեղ անց էր կացնում ամբողջ տարին մեն-մենակ՝ չնայելով որ իր բաղմաթիւ բարեկամիները ինչպէս և իր հողերը գտնուում էին ներքեւում՝ հարթութեան վըրայ: Նա մարդատեաց չէր, բայց միւնոյն ժամանակ չէր սիրում իր կեանքը փոել, բաց անել ուրիշների առաջ: Մի փոքրիկ լեզնական պարուրում էր այդ կեանքը: Պատմում էին, որ 1870 թուի պատերազմի բոլոր կոփների մէջ նա գլխին կրում էր մի արծաթէ սաղաւարտ, որի վրայ ցցոնքի փոխարէն ծածանուում էր մի փունջ կանացի մազ: Ոչ ոք չէր կարող էր այդ պատմութեան ճշմարտութիւնը հաստատել, բայց քսան ալզասցիներ կը վկայէին, որ Փրանսիական զրագոնների մէջ չկար աւելի անխոնջ ձիւոր, աւելի յանդուգն խուզարիու, դժբախտութեան մէջ սեփական ցաւերը մոռացող, աւելի կարեկից ընկեր՝ քան Ռւլրիխը, Սէնտ-Օդիլ լեռան վրայ Հէյդենքրուի կալուածատէրը:

Գերմանական տիրապետութեան տակ՝ նա Փրանսիացի մնաց: Սա իր երջանկութիւնն էր, ինչպէս աղբիւրը այն բազմաթիւ անսախորժութիւնների, որ նա կամ աշխատում էր հարթել կամ կրել մի հատիկ բարիքի փոխարէն—որ նրան թոյլ տան շնչել Ալզասի օդը:

Պարտուած և հսկողութեան ենթարկուած՝ նա գիտէր սակայն պահել իր արժանապատութիւնը: Ոչ մի զիջում՝ որ թոյլ տար մտածել թէ նա մոռանում է ֆրանսիան, բայց և ոչ մի զրգութիւն կամ անօգուտ ցոյց: Ռւլրիխը շատ էր ճանապարհորդում Վոժում, ուր նա ունէր այստեղ, այնտեղ, անտառի կտորներ, որ ինքն էր կառավարում: Ստորին Ալզասում նրա անտառները ամենից աւելի լաւ էին խնամուած: Երեսուն տարուց իվեր նրա գուռը փակ էր հիւրերի առաջ սգի պատճառով բայց նրա տունը յայտնի էր իր նուրբ, ճաշակաւոր կարգ ու սարքով: Այն մի քանի անձինք, Փրանսիացի կամ ալզասի, որոնք կոխել էին նրա շէմքը, գովում էին տանտիրոջ սիրա-

Ամրութիւնը և հիւրընկալութեան արուեստը: Նրան սիրուա էին մանաւանդ այն գիւղացիք, որոնք նրա հետ միասին մասնակցել էին պատերազմին և նրանց որդիները, որոնք գլխարկները հանում էին, երբ Ռւլրիխը յայտնում էր առույտի արտերի կամ այգիների առաջ: Նրան հետուից հեշտութեամբ կարելի էր ճանաչել շնորհիւ իր բարակ, բարձր իրանի, թեթև զգեստների որ նա գնում էր Պարիզում:

Եւ նա ընտրում էր միշտ թուխ գոյնի զանազան երանգները, թունդ մուգից սկսեալ մինչև բաց մուգը: Խնամուած և սրածայր միրուքը երկարաւուն ձև էր տալիս նրա սակաւարիւն և հազիւ կնճուած դէմքին: Շրթունքների վրայ ժպիտն անպալիս էր, բարձր և ուղղագիծ քիթը վկայում էր նրա ազնիւ ցեղի մասին: Թուխ, ներողամիտ և նուրբ աչքերը հեշտութեամբ ընդունում էին հապարտ ու մարտական արտայայտութիւն, հէնց որ խօսք էր բացւում Ալզասի մասին: Այս կոտու մարդի արտաքինին մի փոքր խոնուութիւն էր տալիս այն ճակատը, որ երկու կողմից բարձրանուած, թաղւում էր կոշտ, խիտ և ուղիղ կտրուած մաղերի թանձրութեան մէջ:

Այս երեկոյ Ռւլրիխը տուն վերադարձաւ Բրիւխի լեռներից ու ձորերից, ուր գնացել էր տեսնելու թէ ի՞նչպէս են կտրում անտառը: Մասները չէին սպասում, որ նա նորից դուրս կերթայ և զարմացան, երբ ճաշից յետոյ Ռւլրիխը առաց իր սպասունուն, պառաւ կիզային, որ ծառայում էր սեղանին:

—Իմ քեռորդի Ժանը այսօր պէտք է որ դարձած լինի Ալշէյմ: Եթէ սպասեմ մինչև վաղը, նա անշուշտ կը գայ ինձ այցելութեան: Բայց ես գերազանում եմ այսօր և եթ նրան տեսնել այստեղ: Ես մեկնում եմ, բանալին թող գրան տակը, իսկ ինըդ պառկիր, քնիր:

Ապա նա սուլեց, կանչեց Ֆիդելին, վերցրեց ձեռնափայտը, իջաւ այն շաւիղով, որ Հէյդենբրուխից յիսուն քայլի վրայ կորչում էր անտառում:

Ռւլրիխը՝ իր սովորութեան համեմատ՝ հագած ունէր բլուզ, չոր տերեւի գոյնի անդրավարտիկ, իսկ գլխին կրում էր գնդաճեռութական գլխարկ մախմուրից: Նա քայլել էր արագութեամբ և համարեա էէս ժամից յետոյ, գտնում էր արդէն այն կէտում, ուր շաւիղը միանում էր մի լայն ծառուղիի հետ, որ շինուած էր զրօնողների և Սէնտ-Օդիլի ուխտաւորների համար: Այս վայրը նշանակուած էր տեղացոյց զրքերի մէջ, որովհետև հարեւր մետր երկարութեամբ մի բարձրութիւնից կարելի էր տեսնել ներքենում՝ հարթութեան վրայ հոսող ջրվէ-

Ժը, որ անցնում էր Ալշեյմ գիւղի միջից: Բացի այդ հեղեղատների բացուածքներից հովտի և զառիվայրերի կազմած անկիւնից կարելի էր ցերեկով տեսնել Ալզասի մի կտորը—գիւղեր, արտեր, հովիաներ, Աւելի հեռու, որպէս արծաթի շատի՝ երևում էր Հռենոսը և Սև-Անտառների կապոյտ բոլորաձելիուները: Զնայելով գիշերային մթութեանը, Ուլրիխը համակալով ծառուղիին, ըստ սովորութիւնան առաջ նայեց և տեսաւ միայն պողպատի գոյն մի խաւար եռանկիւնի, որից վեր փայլվիրում էին իսկական աստղեր, իսկ ներքեւում կային հաւասար մեծութեամբ վառ կէտեր: Վերջինները Ալշեյմ գիւղի ճրագներն էին աղօտ ու մշուշապատ, որոնք պլալում էին լուսապասկների մէջ: Ճանապարհորդը մտածում էր իր քեռորդու մասին, որին նա քիչ յետոյ սղմելու էր իր կրծքին:

— Արդեօք ի՞նչ պիտի տեսնեմ ես, հարցնում էր նա ինքն իրան, երեք տարուայ բացակութիւնից յետոյ. Երեք տարի Գերմանիայում անցկացնելուց յետոյ. Ի՞նչպէս է նա այժմ:

Մի վայրկեան միայն նա կանգ առաւ. ապա անցաւ ծառուղին և ցանկանալով կտրուկ ճանապարհով անցնել, ծածկուեց հաճարի ծառերի անտառակի մէջ, որ սուր զառիվայրով իջնում էր դէպի եղենիների անտառը, ուր և դուրս էր գալիս ճանապարհը: Քանի մի դեղնած տերեներ վեռ թրթռում էին վարի սոսերի ծայրին. բայց մեծամասնութիւնը թափուած էր արդէն անցնալ տարուայ տերեների վրայ, որոնք ամբողջապէս ծածկել էին գետինը:

Այդ մեռած տերեները՝ նուրբ ինչպէս մետաքս և խիստ գունատ՝ կազմել էին սեղմ ու դեղին մի սալայատակ: Մառերի մամուապատ և սիւնածե բները ձգուում էին վեր և նրանց կատարները մօտենում, միանում էին իրանց նուրբ ճիւղերով, որոնք ծրագրում էին կամարը թոյլ տալով որ լոյն անցնի: Քանի մի մացաներ միայն եղծում էին գծերի ներդաշնակութիւնը: Մօտ հարիւր մետր բարձրութիւնից դէպի վայր, ինչպէս մի կանաչ պատուար իջնում էր կանաչ ծառերի մի շարք, որ կարծես կազմում էր այս աւերակ մայր տաճարի միակ շէն պատը:

Ուլրիխը շարունակում էր իր ճանապարհը դէպի եղենիները, երբ յանկարծ առաջից լսուեց մի խիստ աննշան աղմուկ, այնքան թեթե, որ ուրիշի համար կ'անցնէր աննկատելի: Դա մի քար էր, որ գահավէժ ներքե գլորուեց սարից աւելի և աւելի արագ, զարկուելով արգելքների և վեր-վեր ցատկելով: Նրա աղմուկը քանի գնաց նուազեց ու ապա վերջացաւ նուրբ ու յատակ շրխկոցով: Պարզ էր որ բարը հասաւ հեղեղատի իւր-

ճապատ յատակին և փշրուեց: Անտառը հազիւ թէ խաղաղուել էր, երբ մի այլ քար, անշուշտ շատ աւելի փոքր, ինչպէս այդ երեսում էր հասած ձայնից, սկսեց զլորուել խաւարի մէջ: Նոյն վայրկինին շունը ցցեց՝ իր մազերը և մրմուլով վազեց դէպի իր տէրը:

— Սուս, Ֆիդե՛լ, պէտք չէ նրանք ինձ տեսնեն, ասաց նրա տէրը:

Եւ միենոյն ժամանակ Ուլրիխը, հասկանալով որ մէկը բարձրանում է անտառի միջով, շտապեց մի ծառի յետևում թագնուել չերեալու համար: Եւ յիրաւի եղնախների մութ ստուերի արանքից նա կարողացաւ տեսնել մի ձիու գլուխը, առաջի ոտները և ապա ամբողջ մարմինը. կենդանին ճգնում էր բարձրանալ իսկատ թեք զառիվերով: Նրա տեսնդուս հեքը լայն քթածակերից ծխի պէս բարձրանում էր խաւարի մէջ: Ջղերը ձգուած, առաջին ոտները կեսացրած՝ փորը գետնին մօտիկ: Նա առաջ էր նետւում ոստումներով, բայց համարեա առանց աղմուկի: Նրա սմբակները թաղւում էին մամուռի և հողի բուսական թանձր ծածկոցի մէջ, շարժելով միմիայն տերմաները, որոնք սողում, թափւում էին իրար վրայ թեթև խշոցով, ինչպէս ջրի կաթիները ջիու վրայ դէպի կենդանու պարանոցը կռացած՝ նստած էր մի զինուորական, բաց կապոյտ զղեստով և հորիզոնական ձևով բռնած էր պահում իր նիզակը, ինչպէս վերահաս թշնամու հանդէպ:

Զիաւորի և ձիու շնչառութիւնները իրար էին խառնում ցուրտ գիշերուայ մէջ: Նրանք առաջանում էին հեինե, իրար պղուած և թպրտալով: Կարծես պայքարի մէջ լինէին: Շուտով Ուլրիխը նկատեց զինուորականի թիկնոցի վրայ կարած դեղին երիզները, մութ գոյնի անդրվարակից վար ու երկարավիր կօշիկները և ուղիղ սուրը կախուած թեք կերպով:

Նա հասկացաւ, որ եկողը Ստրանդուրգում բանակած Հոենոսեան հուսարների գնդից մի ձիաւոր է: Երբ նա աւելի մօտեցաւ, Ուլրիխը նշմարեց դէպի ծայրի սկ և սպիտակ գոյնի դրօշի վրայ դեղին արծիւ: Զինուորականը ենթասպայ էր: Նրա մորթէ տափակ գլխարկի տակ Ուլրիխը տեսաւ հերաթափ, կարմրատակած, բրտնած մի դէմք, խաժ, անհանգիստ, կատաղի և շարոնակ դէպի աջ դարձած աչքեր, որոնց վրայ ծածանում էր սաղաւարտի ցցունքը: Ուլրիխը ճանաչեց: Նրա առաջ Օբերնէի ոստիկան, Համմի որդի՝ Գոտֆրիտ Համմն էր, Հոենոսեան հուսարների աւագ Վախմիստը:

Մարդն անցաւ քսուելով այն ծառին, որի յետևում թագ-

նուած էր Ուլրիխը: Զիաւորի ստուերը ընկաւ Ալգասցու և  
ը շապատի մամուռի վրայ: Զիու սարքի և բրտնքի հոյ տա-  
ր ածուեց նրանից յետոյ: Շառի մօտից անցնելիս, նա էլի մի  
անգամ զլուխը դէպի աջ շարձրեց: Ուլրիխն էլ նայեց դէպի  
այն կողմը, ուր եղենիների շարքն ամենից աւելի երկար էր  
իջնում: Մօտ երեսուն մետր հեռաւորութեան վրայ նա տեսաւ  
միենոյն ոյժով բարձրացող մի ուրիշ ձիաւոր, յետոյ մի եր-  
րորդը: Վերջինները նշմարւում էին արդէն որպէս ստուերների  
ծառերի շարքի մէջ: Ապա աւելի հեռու, շնորհիւ ստուերների  
խաղին, նա նշմարեց ուրիշ զինուորներ և ուրիշ ձիեր,  
որոնք չանգուելով բարձրանուում էին լեռն ի վեր: Եւ յանկարծ  
անտառի խորքում մի փայլակ լոյս տուեց, ինչպէս մի թռչող  
լուսատարիկ: Սա մի հրամանի ազդանշանն էր: Ամենքը մի փայլ  
արին դէպի աջ և մի գծի վրայ շարուելով, լուռ, անմուռնչ շա-  
րունակեցին իրանց խորհրդաւոր վարժութիւնները:

Անտառի խորքում էլի մի փայլիկան ստուերները երե-  
րացին. թափուող տերեների խշցոցը նուաղեց, յետոյ խապառ  
դադարեց, ապա գիշերը վերստին ամայացաւ:

—Անոելի հակառակորդ, որ փարժւում է օր ու գիշեր,  
մրմուց Ուլրիխը:

Անշուշտ, ներքեսում, շաւիղի վրայ մի սպայ կար և  
նրան էին նայում ամենքը: Նա երեսի բարձրացրեց իր սու-  
րը լուսնի շողերի տակ, մօտիկ զինուորները այն տեսան և դրա  
համար ամենքը դարձան: Եւ որքան քիչ էին աղմուկ հանում:  
Ա՛հ, եթէ պատերազմ լինէր, ես գոնէ նրանցից երկախն կը սպա-  
նէի:

Ապա զառնալով իր շանը, որ հանդարտ նայում էր տի-  
րոջը, գումչը վեր ցցած և պոչը շարժելով, Ուլրիխն ասաց.

—Այն, այն, մեկնեցին, գիտեմ դու էլ չես սիրում նրանց,  
ինչպէս ես:

Նա մի փոքր էլ սպասեց, մինչև որ համոզուէր, թէ հու-  
սարներն էլ դէպի իր կողմը չեն դաւնայ: Նա չէր սիրում հան-  
դիպել գերմանացի զինուորներին: Այդ հանդիպումը վիրաւո-  
րում էր պարտութեան ստուերով պատաժ նրա հպարտութիւնը,  
վիրաւորում էր նրա հաւատարմութիւնը դէպի ֆրանսիան,  
նրա սէրը, որ միշտ վախենում էր մի նոր պատերազմից և  
զարմացած էր, թէ ի՞նչուէ անվերջ ուշանում այդ պատերազմը:  
Պատահում էր երբեմն, որ նա ահապին շրջաններ էր կատա-  
րում խուսափելու համար ճանապարհով անցնող որևէ գնդից:  
Ինչու համար այս հուսարները եկան խուզելու իր էջքը դէպի  
Ալշէյմ: Դարձեալ զօրախաղեր. նրանք մի փայլիկան չեն

մոռանում սահմանի արևմուտքը. գիշակեր գազանը՝ ճկուն,  
ճարպիկ, վերստին թափառում է վոժի լեռնակատարների վրայ  
և նայում է հեռուն իմանալու համար, թէ արդեօք հարկաւոր  
չէ վար իջներ...

Ուլրիխը՝ գլուխը քաշ ձգած, շնչում էր եղենիների բուր-  
մունքը. հոգին լի էր տիսուր յիշողութիւններով, որոնք վերա-  
կենդանանում էին մի հատիկ բառով, նոյնիսկ աւելի շնչին ա-  
ռիթով; Այդ յիշողութիւնները խառնել էին իրանց հետ և պա-  
հում էին նրա ամրող երիտասարդութիւնը, որ ամեն անգամ  
այնպէս արագ բարձրանում էր անցեալից... նա աշխատում էր  
աղմուկ չհանել. պահում էր շունը իր յետեռում և նրան չէր  
փայտիայում, կենդանին դունչը բառմ էր տիրոջ քաշ ընկած  
ձեռքին՝ կարծես ասելու համար՝ «ինչու ենք սպասում, չէ՞ որ  
նրանք մեկնեցին արդէն»: Եղենու պուրակի վերջում Ուլրիխը  
գտաւ մի աւելի լայն ճանապարհ և մի քառորդ ժամում հասաւ  
անտառի մարգին:

Հարթութիւնը եղերող կաղնիների և ընկույենիների վրայ  
հովակից փչում էր աւելի սան և աւելի ուժգին քամի. Նա  
կանգ առաւ մի փայրկեան, ականջ դրեց դէպի աջ և ուսերը  
բարձրացնելով դժկամակութեամբ մրմուց՝

—Ահա թէ որտեղից կը գան նրանք վերստին և նրանց  
ոտնածայնները ոչ ոք չի լսի, էհ, մոռանանք մի առ ժամանակ  
և գնանք բարի գալուստ ասելու ժան Օբերլէին.

Ուլրիխը իջաւ վերջին բարձրաւանդակը: էլի մի քանի  
քայլ՝ և անցաւ մացամսերից ու տունկերից, որոնք արգելում  
էին տեսնել հեռու հարթութիւնը: Երկինքը ամրողապէս բա-  
ցուեց, իսկ հեռուն, դէպ աջ ու ձախ, Ալզասի հողը՝ մառախու-  
ղի թափանցիկ քողի տակ, մեղմիւ կապտին էր տալիս: Ցեղերի  
և ցողազարդ խոսերի բուրմունքը բարձրանում էր գետնից:  
Գիշերը էր գեղեցիկ հարկն էր տալիս ընութեանը: Քամին՝  
Հոենոսի այս թափառական ուղեկիցը, ընտաներար սուրում էր  
դաշտերով և քշում, տանում էր այս բուրմունքը, հեռու, հեռու:  
Վաղորդեան կիսախաւարը արգելում էր տեսնել նիրհող Ալզա-  
սի որևէ մանրամասնութիւնը: Հազիւ մի քանի հարիւր մետր  
հեռաւորութեան վրայ նկատում էին խիտ առ խիտ իրար  
սղմուած կտուրներ և նրանցից բարձր՝ մոխրագոյն ու սրածայր  
զանգակատունը Ալզէյմ գիւղն էր այն. Ուլրիխը շտապեց: Նա  
շուտով գտաւ հեղեղատը, որով անցնում էր մի սրընթաց վր-  
տակ: Լեռներում նա բոլոր ժամանակ քայլել էր այդ վտակի  
եղրով, այժմ էլ հետեւեց նրա ընթացքին: Թիչ յետոյ նա տեսաւ  
Ալզէյմի առաջին տունը, որ պարտիզի մերկացած ծառերի մի-

զից ցցւում էր իր բարձր զանգուածով։ Սա Օքերլէների տունն էր։ ճանապարհի աջ կողմը մի սպիտակ պատ և մի վտակ բաժանում էին տունը ճանապարհից։ այդ վտակը երկու հարիւրից աւելի մետք տարածութիւն կտրում, անցնաւմ էր Օքերլէների կալուածը։ Տանտէրը ոչ միայն իր մեքնաների համար անհրաժեշտ ջուրը վերցնում էր այնտեղից, այլ և լայնացրել ու այնպիսի ուղղութիւն էր տուել վտակին, որ ջուրը մինչեւ կալուածի վերջը հոսում էր ծառերի միջից։ Ուլրիխը մտաւ երկաթէցանցերով պատած լայն դռնից, որ բացւում էր ճանապարհի վրայ, անցաւ կամուրջը, յետոյ դռնապանի փոքրիկ խուզը, դէպի աջ թողներով գերաններով լի սղոցարանը, ուր երևում էին խաչածել իրար վրայ զրուած տախտակներ, կտրուած փայտեր, ձողեր, նաև չարդախներ։ Ապա նա դարձաւ դէպի աջ, ըստեց այն ուղին, որ գալարւում էր հինաւուրց ծառերի և մարգագետնի մէջ։ Շուտով նա հասաւ Օքերլէների երկյարկանի տան առաջ։ Մաւերնի կարմիր քարէ այս շինութիւնը կառուցուած էր անցեալ դարի կէսին։ Երեկոյեան ժամի ութ և կէսն էր, երբ Ուլրիխը ծածկուած աստիճաններով բարձրացաւ առաջին յարկը և ծնծեց մի սենեակի դուռ։

**Մի ջահիլ ձայն ներսից կանչեց.**

**—Մտէք։**

Ուլրիխը ժամանակ չունեցաւ իր գլխարկը հանելու։ Իր քեռորդին՝ ժան Օքերլէն, փաթաթուեց նրա պարանոցին և համբուրեց բացազանչելով։

**—Բարե, մօրեղբայր Ուլրիխ, բարե, ինչքան ուրախ եմ. ինչ լաւ ես մտածել։**

**—Դէ, թողի ինձ. բարե իմ ժան. նմը ես եկել։**

**—Այսօր ժամը երեքին ճաշից յետոյ. ես արդէն պատրաստում էի վաղը ձեզ տեսութիւն գալ գիտէ՞ք։**

**—Ես հաւատացած էի, բայց համբերել չկարողացայ, պէտք եղաւ վար իջնել, քեզ տեսնել երեք տարի է, ինչ չեմ տեսնել. ժան, թող որ մէկ վրագ նայեմ։**

**—Ինչքան կամինաք, պատասխանեց երիտասարդը ծիծաղելով. ասացէք, մօրեղբայր, փոխուել եմ ես։**

**Վերջապէս Ուլրիխը նստեց մի կաշուեպատ բազկաթոռի մէջ. նրա հանդէպ պատի մօտ դրուած մի դիւանի վրայ տեղ բռնկց ժանը։ Նրանց բաժանում էր մի գրասեղան, որի վրայ վառում էր մետաղէ քանդակազարդ մի փոքրիկ նաւթի լամպ։**

**Լուսամուտների բարձրացրած վարագոյները թոյլ էին տալիս տեսնել բոլորովին մօտիկ խաղաղ պարտէզը, ուր անշարժ ծառերը ողողուած էին լուսնի շողերով։ Ուլրիխը դիտում էր ժա-**

նին հպարտ ու սիրալիք հետաքրքրութեամբ, Քրոջորդին մեծացել էր և նոյնիսկ մի փոքր աւելի քարձր էր իրանից, Երիտասարդ ալզասցու կորովի գէմքը այժմ աւելի հաստատուն գծեր ունէր, և աւելի կամք էր արտայայտում: Մոխրագոյն բեխերը աւելի խիտ էին, շարժումները ազատ, ինչպէս աշխարհ տեսած մարդու: Նրան կարելի էր հեշտութեամբ համարել հարաւեցի, շնորհիւ իր ածիլած այտերի, իտալական գունատութեան, իր երկար, ստուերոտ թերթերունքների, իր մուգ և կողքից բաժանուած մազերի, իր գունատ շրթունքների, որոնց տակից երեսում էին սիրուն ատաթմները, ամեն անզամ, երբ նա ծիծառում կամ խօսում էր, Սակայն մի քանի ուրիշ նշաններ ցոյց էին տալիս նրա ալզասցի լինելը: Այսպէս դէմքը լայն էր այտերի շրջանում, աչքերը ունէին վոժի անտառների կանաչութիւնը, իսկ քառակուսի ծնօտը մատնում էր ձորերում ապրող գիւղացուն: Նա դեռ մի բան էր պահել այդ գիւղացիներից, որովհետեւ իր մեծ պապը մաճ էր բանել: Նրանց պէս յաջողակ ձիաւորի կազմուածք ունէր: Ժանի այդ թարմ հայեացքից Ուլրիխը հասկացաւ, որ քսան և չորս տարբեկան պյս երիտասարդը, բարոյապէս շատ չէր տարբերուում իր նախկին տեսածից:

—Այն, ասաց նա երկար լոռութիւնից յետոյ, դու նոյնն ես, միայն տղամարդ ես դարձել: Ես վախենում էի աւելի մեծ փոփոխութիւններից:

—Ինչո՞ւ համար:

—Ռովհենակ, իմ փոքրիկ, քո հասակում ճանապարհորդութիւններ կան, որոնք փորձութիւններ են, բայց նախ ասա ինձ խսկապէս մրտեղից ես գալիս:

—Բերլինից, ուր ես անցայ իմ Referandar Examen-ը:

Ուլրիխը հագիւ զսպեց իր չոր ծիծաղը, որի հսկիւնները կորան նրա ալեխան միրուքի մէջ:

—Անուաննենք այդ իրաւաբանութեան գիտական աստիճան, եթէ քեզ հաճելի է (la licence en droit):

—Ի հարկէ հաճելի է, մօրեղբայր:

—Յետոյ, տուր ինձ իննորեմ աւելի լրիւ, և որ գլխաւորն է, աւելի նոր տեղեկութիւն: Զէ՞ որ մի տարի է արդէն ինչ, դու կրում ես ծոցումդ քո գիպլոմը: Ի՞նչ էիր անում այդ բուր ժամանակ:

—Պատմութիւնն կարճ է: Ինչպէս գիտէք, նախանցեալ տարի ես քննութիւն տուի Բերլինում, վերջացնելով իմ իրաւաբանական ուսմունքը: Անցեալ տարի մինչև օգոստոս մի իրաւաբանի ձեռքի տակ աշխատում էի: Այնուհետեւ հօրս թոյլ-

տութեամբ մի ճանապարհորդութիւն կատարեցի Բոհեմիայում, Ռանգարիայում, Խրուաղիայում և Կովկասում, որ տեսեց վեց ամիս: Ապա անցայ Բերլինով՝ իմ ուսանողական իրերը վերցնելու, մի քանի այցելութիւններ անելու համար և այժմ ահա այսուեղ եմ...

—Ի դէպ, հայրդ լաւ յիշեցիր... քեզ տեսնելու շփոթութեան մէջ ես բոլորովին մոռացայ նրան... ի՞նչպէս է:

—Նա այստեղ չէ:

—Ի՞նչպէս, քո վերադարձի երեկոյին նա ստիպուած է եղել բացակայել:

—Նա գնացել է մասնակցելու խորհրդական ֆոն-Բոխերի մի հանդիսաւոր ճաշին... բրոջս էլ հետն է տարել: Լաւ ընդունելութիւն է, այնպէս չէ:

Ժանի խօսքերի մէջ թեթև գառնութիւն կար: Նրանք լը-սեցին. ծիծաղը կորաւ: Կարճատե խօսակցութիւնից յետոյ նը-րանք զգում էին բոլորովին մօտիկ, անխուսափելի, վրդովեցուցիչ, ճակատագրական հարցը. այն՝ որից անկարելի է ազատուել, որ միացնում և բաժանում է, որ թագնուած է ընկերական բոլոր յարաբերութիւնների, վոխադարձ պատիների, հա-լածանքների, ինչպէս և հասարակական հաստատութիւնների տակը: Այն հարցը, որ երեսուն տարուց ի վեր Եւրոպային պահում է զինուած կացութեան մէջ:

—Ես մենակ ճաշեցի, շարունակեց ժամը, այսինքն պապիս հետ:

—Պապիդ ներկայութիւնը՝ հաղիւթէ ներկայութիւն հա-մարուե. խեղճ մարզը ի հարկէ միշտ այնպէս թոյլ է և հիւանդ:

—Հաւատացնում եմ ձեզ, որ նա սովով խիստ առողջ է:

Մի երկրորդ լուսութիւն վրայ հասաւ, որից յետոյ Ուլրի-խը անհամարձակ ձևով հարցրեց,

—Իսկ իմ քմյըը... բո մայրը... նա էլ նրանց հետ է,

Երիտասարդը գլանով գրական նշան արեց:

Այս պատասխանի վրայ Ուլրիխի կսկիծն այնքան մեծ եղաւ, որ նա աչքերը դարձրեց չմատնելու համար իր ներքին աշխարհը: Ապա վեր նայելով՝ նրա հայեացքը կանգ առաւ Սպինդլեր նկարչի մի գործի վրայ, որ կախուած էր պատից և ներկայացնում էր ճօճանակով խաղացող երեք ալղասցի աղ-ջիկներ: Ապա նա շուտով դարձաւ քեռորդուն, նայեց նրան շեշտակի և յուղմոնքից ճաթած ճայնով ասաց.

—Իսկ գմւ... գմւ. էլ կարող էր ճաշել խորհրդական ֆոն-Բոխերի հետ... ի նկատի ունենալով ձեր բարեկամական յա-

բարերութիւնները այս գերմանացիների հետ... Արդեօք դու ցանկութիւն չունէիր ծնողներին հետ գնալ այնտեղ:

—Ռչ:

Այս մի հատիկ բառն արտասանուեց վճռապէս և պարզ կերպով: Բայց և այնպէս Ուլրիխը չզտաւ իր փնդուած տեղեկութիւնը, այդ պատասխանի մէջ: Այն, Ժան Օրերլէն հասուն մարդ էր դարձել: Նա չէր կամենում պախարակել իւրայիններին, իր կարծիքը յայտնել, մեղադրելով միւսներին: Մօրեղբարը վերսկսեց հեգնութեան նոյն շեշտավ:

—Սակայն, սիրելի Ժան, այս ամբողջ ձմեռ իմ ականջները խլացրին Բերլինում ունեցած քո աշջողութիւնների պատմութիւններով: Ինձ չէին խնայում: Ես գիտեմ արդէն, որ դու գժուացրել ես մեր շիկահեր թշնամինների օրիորդներին: Ես գիտեմ նոյնպէս անուններ...

—Օ՛, աղաջում եմ, մօրեղբայր, ասաց Ժանը լրջութեամբ: Հանաքի չտանք այդպիսի ծանրակշիռ հարցերը այն մարդկանց պէս, որոնք սիրու չեն անում իրերին ուղղակի նայել և իրանց կարծիքն ասել: Ճշմարիտ է, որ ես ձերինից տարրեր դաստիարակութիւն եմ ստացել, գերմանական դաստիարակութիւն, ըայց այդ արգելք չի կարող լինել, որ ես քնքշութեամբ սիրեմ իմ երկիրը... ընդհակառակն:

Ուլրիխը սեղանի վրայից մեկնեց ձեռքը և սեղմեց Ժանի ձեռքը:

—Աւելի լաւ, պատասխանեց նա:

—Միթէ դուք կասկածում էիք:

—Ես չէի կասկածում, զաւակս, ես միայն անգիտանում էի: Ես տեսնում եմ այնքան բաներ, որոնք ինձ ցաւ են պատճառում և այնքան համոզունքներ, որոնք խորտակում են:

—Ես որոշել եմ ապրել Ալհէյմում, մօրեղբայր, ապացոյց՝ որ ես սիրում եմ մեր Ալզասը:

—Ի՞նչպէս, բացազնեց Ուլրիխը սաստիկ զարմացած, դու չես ուզում մոնել գերմանական ծառայութեան մէջ, ինչպէս հօրդ ցանկութիւնն է: Բայց դա ծանրակշիռ խնդիր է զաւակս, դու ուզում ես քեզ աղատել հօրդ փառասիրութիւնից: Դու նրա ապագայ ծրագրների համար փառաւոր նիւթ կարող էիր լինել... նա այդ գիտէ:

—Նա կասկածում է այդ մասին, թէն իմ գալուց վեր մենք դեռ ժամանակ չունեցանք բացատրուելու:

—Բայց ի՞նչ է քո նպաստուկը:

Թարմ ժպիտը կրկնն փայլեց Ժանի լրթունքների վրայ:

—Իմ նպատակն է փայտի գործով պարագել, ինչպէս հայրըս, ինչպէս իմ պապ Ֆիլիպը. Երբ ես իմ քննութիւններից յետոյ ճանապարհորդում էի Գերմանիայում, Աւստրիայում՝ լիուլի ժամանակ ունեցայ ուսումնասիրել անտառները, սղոցարանները, գործարանները, ինչպէս մերն են... Դուք լալի՞ս էք:

—Լամց... չէ:

Ուզրիխը չէր լալիս, բայց նա ստիպուած էր մատի ծայրով չորացնել իր թաց արտեանունըները:

—Յամենայն դէպս դա կը լինէր ուրախութեան արցունք, իմ փոքրիկ, ծ, մեծ և ճշմարիտ ուրախութեան: Տեսնել քեզ հաւատարիմ այն բոլորին, ինչ որ ես ամենից աւելի եմ սիրել աշխարհում... տեսնել քեզ մեզ մօտ... Իմանալ, որ դու հրաժարուում ես պաշտօններ և պատիւներ ընդունել նրանցից, որոնք բանացան քո հայրենիքի վրայ... այն, սա մի երազ էր, որ ես այլ ևս չէի համարձակւում ունենալ... Սակայն, անկեղծօրէն ասեմ, ես չեմ հասկանում... Ես զարմացած եմ... Ինչու դու նման չես քո հօրը, Նման չես կրտիչնին, որոնք այսպէս բացարձակ կերպով... յարել են գերմանացիներին: Դու քո իրաւաբանական ուսմունքն առել ես Միւնիսինում, Բոնում, Հայդելբերգում, Բերլինում. դու չորս տարի ապրել ես Գերմանիայում, բացի քո կոլլեժում անցկացրած ժամանակը: Այդ ինչպէս է որ դու չես գարձել գերմանացի:

—Ես նոյնիսկ քեզանից աւելի նուազ գերմանացի եմ, մօրեղբայր:

—Այդ ինչպէս:

—Քեզանից աւելի նուազ, որովհետեւ ես նրանց աւելի լաւ եմ ճանաչում: Ես նրանց կարողացայ ճանաչել համեմատելով մեզ հետ:

—Ցետեր:

—Նրանք մեզնից վատ են:

—Տէր Աստուած. Ինչ հաճելի է լսել. մինչև այժմ միշտ հակառակն էին ասում: Մանաւանդ Ֆրանսիայում՝ 1870 թուի մեր յաղթողների գովասանքները վերջ չեն առնում:

Երիտասարդը՝ Ուզրիխի յուզմունքով ոգևորուած՝ մէջքը հեռացրեց դիւանի թիկունքից և դէպի առաջ կուացաւ. լամպի լոյսը ողողեց նրա դէմքը և կանաչաւուն աշքերի փայլը աւելի վառ դարձրեց:

Նա շարունակեց:

—Զսխալուէք մօրեղբայր. Ես չեմ ատում գերմանացիներին. սրանով ես տարբերուում եմ ձեզնից: Ես նոյնիսկ հիանում եմ նրանց վրայ, որովհետեւ սքանչելի կողմեր ունին: Նրանց

մէջ ես ընկերներ ունիմ, որոնց խորապէս յարգում եմ: Կարո  
էի և ուրիշներն ունենալ: Ես պատկանում եմ այն սերունդին,  
որ չի տեսել ձեր տեսածները և ազրել է տարբեր կերպով:  
Ես պարտուած չեմ եղել:

—Երանի՞ քեզ:

Սակայն, որքան մօտիկից ճանաչեցի նրանց, նոյնքան ա-  
միլ խորը կերպով զգացի, որ ես ուրիշ եմ, ուրիշ ցեղից:  
Զգացի, որ նրանց համար անմատչելի իդէալների մի ամբողջ  
շարք ունենք մենք, որ ես համարում եմ գերազանց և  
որը առանց իմանալու, թէ ի՞նչու, անուանում եմ ֆրանսիա:

—Բրափօ, իմ ժան, բրափօ:

—Ծեր գրագունը նոյնպէս կռացել էր, գունատ էր, և  
նրանք բաժանուած էին իրարից միմիայն սեղանի լայնքով:

—Այն՝ ինչ ես անուանում եմ ֆրանսիա, մօրեղբայր,  
ինչ որ ես պահում եմ սրտում, ինչպէս մի երազ, ու այն եր-  
կիրն է, ուր աւելի մեծ դիւրութիւն կայ մտածելու...

—Այն:

—Խօսելու:

—Ճիշտ այդպէս:

—Ծիծաղելու:

—Ի՞նչ լաւ ես ըմբռնել:

—Ուր հոգիները անհուն երանգներ ունին. այն երկիրը՝  
որ սիրած կնոջ հմայքն ունի, Ալզասի նման մի երկիր, միայն  
աւելի գեղեցիկ:

Երկսով էլ միաժամանակ ոտքի ելան: Ուլրիխը դէպ ինքը  
քաշեց իր քրոջ որդուն՝ սղմեց կրծքին այս տաք գլուխ երի-  
տասարդին:

—Ֆրանսիացի, բացագանչեց նա, Փրանսիացի ես մինչև  
ոսկորներիդ ծուծը, մինչև արեանդ գնդակները, իմ խեղճ, իմ  
անուշ փոքրիկ: Երիտասարդը շարունակեց՝ գլուխը միշտ յենած  
ծերունու ուսին:

—Ահա թէ ի՞նչու ես չեմ կարող ապրել այնտեղ, չոենոսի  
միւս ափին. ահա թէ ինչմիւ ես պէտք է ազրեմ այստեղ:

—Այդ դէպքում ես իրաւունք ունիմ ասելու՝ ոիմ խեղճ  
փոքրիկ, պատասխանեց Ուլրիխը... աւաղ, ամեն ինչ փոխուած  
է... մինչև իսկ այստեղ, քո տանը... Դու կը տառապես, ժան, քո  
բնաւորութեան տէր մարդը չի կարող չտառապել... Այժմ ես  
բոլորը հասկանում եմ, բոլո՞րը...

Նրանք նստեցին դիւրանի վրայ կողք կողքի և երջանիկ:  
Ուլրիխը յարգարում էր իր միրուքը, որ նրա մշտական ինսամ-  
բի առարկան էր: Յուզմունքից ուշքի եկած, նա ասաց.

— Գիտե՞ս, որ այս երեկոյ խօսելով Թրանսիայի մասին, այն էլ այս ձևով՝ մենք յանցանք գործեցինք, մի յանցանք, սակայն, որ ես պաշտում եմ: Արգելուած է խօսել Թրանսիայի մասին... Եթէ մենք դրսում լինէինք և Համմը մեղ լսէր, մեր բանը բուրդ էր, անպատճառ մի արձանագրութիւն:

— Ես նրան հանդիպեցի այսօր ճաշկց յետոյ:

— Իսկ որդին քիչ առաջ անտառի խորքում իմ առաջ ցըցուեց: Նա ենթասպայ է հոենոսեան հուսարական գնդի... Քո ապագայ գնդի... Կառքի ձայն է լսում, չէ:

— Ո՞չ:

— Մէկ ականջ դիր:

Երկուվ էլ սկսեցին ականջ գնել: Միենոյն ժամանակ լուսամուտից նայում էին դէպի դուրս: Լրիւ լուսինը իր շողերով ողողել էր պարտէզը, ուր երեսում էին հաստատուն ծառերը, քընարածե շինուած կանաչ մարգը, երկու ճերմակ ուղիներով, իսկ աւելի հեռում՝ սղոցարանի կղմինդրածածկ կտուրները: Ո՞չ մի աղմուկը, բացի գործանոցի մօտիկ թմրի փոքրիկ ջրվէժի միակերպ ձայնից, որ կարծես մերթ հեռանում էր և մերթ մօտենում, նայելով փչող քամու զօրութեանը և ուղղութեանը: Վերջին քամին փչում էր հիւսիս-արևելքից կամ «մայր եկեղեցու պլատ-ֆորմից» ինչպէս սիրում էր ասել Ռւլրիխը, ակնարկելով Ստրազբուրգին:

— Ո՞չ, տեսնո՞ւմ էք, որ սա ջրվէժի ձայնն է, ասոց ժանը: Հայրս պատուիրել է կառապանին սպասել Մոլդէյմում, ժամը 11<sup>1</sup> շի գնացքին: Մենք գեռ ժամանակ ունենք զրուցելու:

Նրանք ժամանակ ունէին և լաւ օգտուեցին այդ ժամանակից: Սկսեցին խօսել կամացուկ, առանց շտապելու և յոյզի, ինչպէս այն մարդիկ, որոնք էական սկզբունքների վրայ համաձայն լինելով՝ կարողանում են համարձակ կերպով շօշափել ամեն տեսակ և նուազ կարեռութիւն բնացող լինդիրներ: Նըրանք խօսեցին միամեայ կամաւոր զինուրական ծառայութիւնից, որ ժանը իրաւունք էր ստացել յետաձգել մինչև իր քսան և չորս տարին: Խօսեցին այն նոր կեանքի մասին, որ ժանը պիտի սկսէր առաջիկայ հոկտեմբերին, այն բնակարանի մասին որ նա մտածում էր վարձել Ստրազբուրգում: չմոռացան նաև յիշել, թէ որքան հեշտ կը լինի այնտեղից համարեա ամեն կիրակի գալ Ալշէյմ: Մի քանի անգամ կը կնուած այդ սիրելի անունը զարթեցրեց նրանց հոգում շատ վերյուշեր իրանց երկրից, յիշեցին Սէնտ-Օդիլ, Հէյդենբերգուխի անտառի տունը, յիշեցին Օքերնէս, Սալերնը, ուր Ռւլրիխը անտառներ ունէր, Գերվիլլերը՝ ուր նա ազգականներ ունէր: Ամբողջ Ալզասն էր

վերակենդանանում նրանց յիշողութեան մէջ, նրանք լաւ էին հասկանում իրար, Ոտ ոտի վրայ և դիւանի երկու անկիւն-ները բռնած՝ նրանք ծխում էին, ազատութիւն տալով իրանց խօսքերին, ձայնին և ծիծնդին։ Զրոյցն այնքան երկար տևեց, որ գրան վրայ կախուած ՍԱ-Անտառի փայտէ ժամացոյցը զարկեց կէս գիշեր։

—Արդեօք չզարթեցրի՞նք պապիդ, ասաց Ռւլրիխը վեր կենալով և ցոյց տալով այն պատը, որ բաժանում էր ժանի սենեակը հիւանդ ծերունու սենեակից։

—Ո՛չ, պատասխանեց Ժանը, նա այժմ համարեա էլ չի քնում, ես հաւատացած եմ, որ նա շատ գոհ է մնացել լսելով իմ ծիծաղը։ Երբ ժամը 5-ին մերոնք մեկնեցին, ես բաւական երկար ժամանակ անցկացրի նրա հետ և նրան լաւ դիտեցի։ Նա լսում է և հառկանում է ամեն ինչ, Նա ձեր ձայնը ճանաչած կը լինի, ես հաւատացած եմ, և գուցէ, նոյնիսկ քանի մի բառեր ըմբռնածն ։

—Դա նրան հաճուք պատճառած կը լինի, իս փոքրիկ։ Նա պատկանում է հսագոյն Ալզասին, այն որ այժմ քեզ երևում է մասախուղի միջից, որին ես կապուած եմ, թէս աւելի ջահիլ եմ քան Օրերլէն։ Այն Ալզասը ամբողջովին Փրանսիական էր և այն ժամանակի մարդկանցից և ոչ մէկը փոխուած չէ։ Տեսնեմ ես քո պապը, տեսնում ես ծերունի Բաստիանը։ Մենք այն սերունդն ենք, որ տառապեց։ Մենք մարմնացած վիշտն ենք. իսկ քո հայրը՝ հնագանդութիւնը։

—Իսկ ես։

Ռւլրիխը շեշտակի նայեց երիտասարդին իր խորաթափանց աչքերով և ասաց.

—Դու, դու աւանդութիւնն ես։

Եւ նրանք կը կամենային ծիծաղել երկսով էլ, բայց չկարողացան։ Կարծես թէ այս բառի ճշմարտութիւնն այն աստիճան կատարեալ էր, որին մարդկային սովորական դատողութիւնները չեն հասնում։ Կարծես նրանք երկսով էլ զգացին, որ ճակատագիրն այնտեղ էր, այս սենեակում, անտեսանելի և որ նրանց սրտի խորքում կը կնում էր միաժամանակ՝ «Այն, ճշմարիտ է, սա աւանդութիւնն է»։

Միմիայն կեանքի այս խորհրդի մերձաւորութեամբ կարելի էր բացատրել այն յուղմունքը, որ խեղդում էր նրանց։ Եւ նա ցրիւ եկաւ Ռւլրիխը ձեռքը մեկնեց իր քեռորդուն աւելի հանդիսաւորութեամբ, քան այդ բառը ասելուց առաջ, որ նրա շրթունքից յանկարծակի դուրս էր թռել։

Նա չէր փողմանում իր ասածի համար և այդ բառն այժմ նրանից չէր հեռանում:

—Ցտեսութիւն, իմ սիրելի Ժան. Ես գերազասում եմ չըպատահել իմ փեսային, որովհետև չգիտեմ, թէ ինչպէս կը հանդիպեմ նրան: Բոլորն ինչ դու ասացիր, ինձ կը ճնշի նրա ներկայութեամբ:

Իմ կողմից դու նրան բարի գիշեր մաղթիր: Ես շտապում եմ դէպի իմ անտառները լուսնկայ գիշերով: Ափսոս, այսպիսի ժամանակ մարդ հրացան ունենար և մեր եղնախերի վրայ մի զոյգ փայտմորից տեսնէր:

Նրանք զգուշութեամբ մի քանի քայլ փոխեցին, նախասմենեակի գորդի վրայ, աստիճաններին համնելու համար:

—Մօրեղբայր, ասաց Ժանը կամացուկ, վատ չէր լինի, եթէ մտնէինք պապիս մօտ: Ես հաւատացած եմ, որ նա չի քնել և շատ գոհ կը լինի:

Ուլրիխը, որ քայլում էր առաջից՝ կանգ առաւ և յետ դարձաւ: Ժանը քացեց այն դուռը, որի առաջ կանգնած էին: Նախ ինքը մտաւ և ասաց զսպուած ձայնով:

—Պապիկ, ես ձեզ մօտ հիւր եմ բերել. մօրեղբայրս Ուլրիխն է, որ ցանկացաւ ձեզ տեսնել:

Մենեակը մեծ էր, կիսախաւար և վարագոյրները փակ: Զախ անկիւնը գրաւում էր անկողինը, իսկ նրա և լուսամուտի մէջ դրած էր գիշերային թափանցիկ յախճապակայ փոքրիկ լամպ, որ աղօտ կերպով լուսաւորում էր սենեակը. գիշերային սեղանի վրայ լամպի շողերի լուսապսակի մէջ դրուած էր պղնձէ մի փոքրիկ խաչելութիւն և մի ոսկէ ժամացոյց. սենեակի միակ փայլուն իրերը: Անկողնի մէջ մի ծերունի աւելի շուտ նստած էր, քան պառկած: Նա հագել էր բրդէ մոխրափյն թելից երկուտակ բաճկոն, մէջքը և գլուխը յենած բարձերին և ձեռքերը վերմակի տակ, որ պահում էր գեղ ծալքերը: Պատառի մի փնջածայր ժապաւէն, կախւում էր մինչեւ անկողնի կէսը և ծառայում էր որպէս զանգակի թել: Ծերունին անդամալոյծ էր: հեռուից դըժուար էր իմանալ, քնած է, թէ արթուն, կեանքը կամաց-կամաց քաշուել էր նրա ներսի աշխարհը. նա չէր խօսում, դըժուարութեամբ էր քայլում կամ շարժում գործում: Հաստ և գունատ այտերից վար՝ շրթունքները շարժում էին միայն այն ժամանակ, երբ նա ուտում էր և կամ երբ ասում էր իր սովորական խօսքը, ինչպէս երեք ճիշ. «Բաղցած եմ, ծարաւ եմ, հեռացիր»: Ծերերին յատուկ ծուլութիւնը քաշ էր ձգել նրա ծնօտը, որ հրամայել էր այնքան մարդկանց: Ուլրիխը և Ժանը

առաջացան մինչեւ սենեակի կէսը, առանց որ ծերունին որևէ նշանով ցոյց տար թէ, հասկանմաւ է նրանց ներկայութիւնը: Մարդկային այս խղճալի աւերակը սակայն այն մարդն էր, որ հիմնել էր Ալշէյմի գործարանը, որ կարողացել էր գիւղական փոքրիկ հողատիրոջ կացութիւնից վեր բարձրանալ, ընտրուել բողոքարկու պատգամաւոր և իր ձայնը հնչեցնել Շայխստագում Ալզասի ոտնահարուած իրաւոնքները յետ ուղելու և խշան Բիսմարկից արդարագատութիւնն պահանջելու համար: Խելք՝ գանգի մէջ բանտարկուած: Արթուր էր, սակայն, ինչպէս այդ բոցը, որ լուսաւորում էր սենեակը, բայց այլ և չէր արտայայտում: Երազների անվերջ շարքի մէջ որքան մարդիկ և իրեր էին անցնում այդ մարդու աչքի առաջից, որ տեսել էր ողջ Ալզասը, որ նրան չափչիել էր ամեն ուղղութեամբ, խմել էր նրա սպիտակ գինին՝ հարստի և աղքատի սեղանից, իրու ճանապարհորդ, վաճառական, անտառատէր, հայրենասէր... Եւ ահա նա, այս լերկ ու կնճուու գլուխը, այս քաշ ընկած դէմքը, այս ծանրացած կոպերը, որոնց արանքում, որպէս մի գունդ բոժոժի անշարժ բացուածքի մէջ, երևում էր դանդաղ ու տիսուր աչքը:

Այցելուները նկատեցին սակայն, որ հիւանդի հայեացքը կանգ առաւ նրանց վրայ մի անսովոր հաճոյքով: Նրանք լսեցին, թոյլ տալով ծերունուն ճաշակել իր յուշերի հաճոյքը, որ նրանց համար յաւիտենական գաղտնիք էր: Ապա Ուլրիխը մօտեցաւ անկողնին և ձեռքը դնելով ֆիլիպ Օրերէի բազկի վրայ, մի փոքր կռացաւ ականջին մօտ, աշխատելով աչքը նրա աչքերին ձգել, որ ծերունին ջանք էր անում բարձրացնել:

—Մէնք երկար խօսեցինք՝ ես ու ձեր թոռը, պարոն Օ-բերլէ... Լաւ տղայ է ձեր ժանը, ասաց Ուլրիխը:

Իրանի մի դանդաղ շարժումով ծերունին գլուխը շուռ տուեց իր թոռանը տեսնելու համար:

—Մի լաւ տղայ—շարունակեց անտառատէրը—որին չի կարողացել Բերլինը փչացնել: Նա մնացել է ձեզ արժանի, որպէս ալզասցի և հայրենասէր... Նա պատիւ է բերում ձեզ:

Չնայելով լոյսի աղօտութեանը, Ուլրիխը և ժանը կարողացան նկատել մի ժամկա ծերունու դէմքին. դա նրա տակաւին երիտանսարդ հոգու պատասխանն էր:

Նրանք հեռացան առանց աղմուկի՝

—Բարե՛ գիշեր, պարոն Օրերլէ, բարի գիշեր պապիկ:

Գիշերային լամպի բոցը երերաց և նրա հետ շարժուեցին ստուերներն ու շողերը: Դուռը վերստին փակուեց և ընդհատուած երազը վերսկսեց այն սենեակում, ուր արևի մայր մըտ-

նելուց յետոյ ոչինչ ներս չէր մտնում, բացի Ալշէյմի եկեղեցու զանգակատան ժամացոյցի ձայնը:

Ուրլիկը և իր քեռորդին բաժանուեցին աստիճանների վրայ, Դրսում սառնամանիք էր և մարգերը ողջ սպիտակին էին տալիս, եղեամի շերտի տակ:

— Լաւ եղանակ է քայլելու համար, ասաց Ուրլիկը: Ես քեզ կոպասեմ Հէյդենբրուխում: Նա սուլեց, կանչեց շանը և փայփայեց նրա ըոցագոյն գոռնչը:

— Առաջնորդիր ինձ, Ֆիդել, ասաց նա. բոլոր ժամանակ ես պէտք է խորհիմ այն բաների մասին, ինչ ինձ ասաց այս երեխան:

Հաղիւ թէ նա հեռացել էր մի քանի հարիւր մետր, և դեռ հնչում էր նրա քայլերի ձայնը դէպի Ուրլովենի անտառները տանող ճանապարհի վրայ, երբ ժամը լոեց գիշերային խաղաղութեան մէջ մի ուրիշ աղմուկ: Այդ արդէն ձիերի տրոփին էր, որ լսում էր Օքերնէի կողմերից: Նրանց սմբակները զարկում էին խճապատ գետնին, ինչպէս ցորեն ծեծելու գործիքը, հեշանին:

Եւ այդ ձայնը գեղջկական էր. նա չէր խոռոշում, չէր խանգարում ոչ մէկի քունը: Մէկ Ֆիդելն էր, կատաղաբար հաջում դէպի անտառը. նա էլ, անշուշտ, ուրիշ պատճառներ ունէր... Ժանը ականջ զրեց մօտեցող կառքի ձայնին, որ կամաց-կամաց նուաղեց: Նա հասկացաւ, որ կառքը ներս մտաւ ընակութիւնների շրջանը՝ փողոցները, կամ գոնէ պարտէզների մէջ, որոնք ամառ ժամանակ իրանց խնձորենիներով, կեռասենիներով և ընկուղենիներով ամրողապէս ծածկում են Ալշէյմը: Եետոյ կառքի ձայնը յանկարծ լսուեց աւելի ուժգին ու բարձր, ինչպէս տունելից դուրս ընկնող գնացքի որոտը: Աւազը ճոռաց ծառողիի ծայրում, երկու լավտերներ ծոռեցին և ոլացան ծառաստանով. կանաչը, մացանները, ծառերի բնի ստորին մասը աղօտ լոյսի տակ յանկարծակի դուրս ցցուեցին խաւարից և յետոյ վայրկենապէս ծածկուեցին. կառքը կանգ առաւ տան առաջ: Ժանը կանգնած էր սանդուխների գլխին. ցած վաղեց և բացեց կառքի դռնակը: Մի կարմրուտած ու սպիտակազգեստ աղջիկ առաջինը դուրս թռաւ կառքից. նա կրում էր սպիտակ կրկնոց, սպիտակ բրդից ծածկոյթ և սպիտակ կօշիկներ թեթևաքայլ ու արագ, նա համարեա թռաւ ժանի առաջից, անցողակի համբուրելով նրա ճակատը և ընաթաթախ շրթունքների արանքից շնչաց.

— Բարի երեկոյ, եղբայր:

Եւ բարձրացնելով փէշերը՝ թոյլ-թոյլ, երերալով, գլուխը

ծանրացած, նա բարձրացաւ աստիճանները և ծածկուեց նախագաւթում:

—Բարի երեկոյ, բարեկամ, ասաց մի տղամարդի իշխող ձայն, դու մեզ սպասում էիր. ի զուր... Շուտ արի Մոնիկը Զիերը խրանել են... Օգիսատ, վաղը նրանց տասներկու իմարդարի կը տաս և կը տանես պայտելու... Ժան, զուր տեղը դու մեզ լընկերացար: Շատ լաւ անցաւ: Պարոն ֆոն-Բիւխերը երկու անգամ հարցրեց քո մասին:

Խօսողը ցած իջաւ կառքից, սղմեց ժանի ձեռքը, դարձաւ տիկին Օբերլէին, որ տակաւին նստած էր կառքի խորքում, ժամանակ գտաւ փորձուած մարդու հայեացքով դիտելու աստիճանները և ձիերը, որոնց սկ քրտնաթոր մորթին կարծես սապոնած լինէր: Երկու կողմից, քոնքերից վար կախուած միրուքի մասերը (Խաօր) շրջանակում էին նրա լիքը և լուրջ դէմքը. արձակ գգուած ամարային վերարկուի տակից երևում էր բաճկոնակին ու շապիկը, ուր փայլում էին հուենուսեան երկու քարեր: Այս բոլորը սակայն, ինչպէս և նրա հրամայող ձեռքը, երևացին միայն մի վայրկեան: Իր հրամանները և կարգադրութիւնները անելուց յետոյ, ժողէք Օբերլէին, որպէս մի աչարուք տէր, որ երբէք ոչինչ չի մոռանում, թեթևութեամբ գլուխը բարձրացրեց, լարեց իր աչերի բոլոր տեսողութիւնը, նայեց դէպի ջրվէժը, ուր նիրելում էին բրդածն ծառերը, իմանալու համար, թէ արդեօք կրակի վտանգ չկմի, կամ որևէ ստուեր չի թափառում սղոցարանների շուրջը: Յետոյ թեթևաքայլ, երկերկու աստիճան ցատկելով նա բարձրացաւ սանդուխների երկրորդ մասը և ներս մտաւ: Որդին ոչինչ չպատասխանեց: Նա օգնում էր տիկին Օբերլէին կառքից իշխելու. վերցրեց հովհարը, ձեռնոցները և հարցրեց.

—Շատ չէք յոգնել, սիրելի մայրիկ: Եւ մօր անուշ աչքերը ժպտում էին. նուրբ ու երկար շրթունքները պատասխանում էին. «Ո՛չ, չեմ յոգնել, բայց սա էլ իմ տարիքի բանը չէ, սիրելի զաւակ. մայրդ արդէն պառաւ է»: Նա յենուեց իր զաւակի ձեռքին, ոչ այնքան յոգնածութիւնից, որքան մայրական հպարտութիւնից: Նրա դէմքի վրայ նկարուած էր անսահման տըլիրութիւն և աստիճանները բարձրանալով՝ կարծես հարցնում էր ժանին... «Դու չես զայրացել որ ես գնացի այնտեղ. ես չէի կարող ուրիշ կերպ վարուել. և ես տանջուել եմ»: Նա հազած ունէր սկ մնդուսէ շրջազգեստ. իր տակաւին խիստ սկ մազերի վրայ կրում էր մի քանի ակներ, իսկ ուսերին՝ կապտաւուն աղուէսենի վզնոցը: Ժանի համար նա մի դժբախտ՝ թագուհու տեսք ունէր: Եւ որդին հիացած էր նրա քայլուածքի վա-

յելշութեան, գլխի գեղեցիկ կեցուածքի վրայ, որ ունէր ալզասեան հին սերնդին պատկանող այս կինը, նա հպարտ էր, որ ինքը այս կնոջ որդին է, և այդ հպարտութիւնը միայն մօրը կ'ուզէր ցոյց տալ: Նա ընկերացաւ մօրը միշտ թևանցուկ, նրան աւելի մօտ լինելու հաճոյքն ունենալու և ամեն քայլում նրան կանգնացնելու համար:

—Մայրիկ, գիտես, ես մի շատ լաւ երեկոյ անցկացրի: Նա էլ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք էլ այսուեղ լինէիք... Կարո՞ղ էք երևակայել, որ Ուլրիկի քերին եկաւ ժամի ութ ու կէսին և մեկնեց միայն կէս գիշերին, քիչ առաջ...

—Նա երբէք մեզ համար այդքան երկար չէր մնայ, պատասխանեց մայրը տխուր ժպտով. նա միշտ խոյս է տալիս մեզանից...

—Դուք ուզում էք ասել, թէ նա հեռանում է. ես նրան այսուհետեւ կը բերեմ:

—Ա՛ն, երիտասարդութիւն, երիտասարդութիւն. եթէ դու գիտենայիր, թէ ես որքան բան եմ տեսնում, որոնք հեռանում, խոյս են տալիս...

Նա կանգ առաւ իր հերթին. նայում էր որդուն, որին չէր տեսել ճաշից յետոյ և ժպտում էր աւելի ուրախութեամբ:

—Դու սիրում ես եղբօրս:

—Աւելի քան առաջ, ես նրան համարեա թէ նոր գտայ:

—Առաջ դու շատ ջահիլ էիր...

—Մենք երկար զրուցեցինք, և երևակայեցէք, մենք համաձայն ենք բոլոր խնդիրներում:

Մայրը նայեց որդու աշքերին սանդուխի աղօտ լուսաւորութեան մէջ:

—Բոլմը, հարցը նա:

—Այն, մայրիկ, բոլոր:

Նրանք հասան վերջին աստիճաններին:

Մայրը ձեռնոցով պատած մատը շրթունքին դրեց և դուրս քաշեց թէր որդու թէկի տակից: Նա իր սենեակի դրան առաջն էր, թիլիպ Օբէրէկի սենեակի դէմ ու դէմ: Ժանը համբուրեց մօրը, մի փոքր յետ քաշուեց, վերստին առաջացաւ դէպի նա և սղմեց իր կրծքին լոռութեամբ:

Ապա նա մի քանի քայլ գնաց դէպի միջանցքի խորքը, կրկին յետ նայեց այս կնոջը, որին այնպէս ընականից պատշաճում էր սուզիք պարզ զգեստը, նայեց նրա քաշ ընկած գունատ ձեռներին, նրա ուղղագիր գլխին, որոշ, քայլ անուշ արտայայտութեամբ դիմագծերին և շշնչաց ուրախութեամբ:

—Օբերլէի Սուրբ Մոնիկ, աղօթեցէք մեզ համար:

Մայրը կարծես չմսեց. բայց կանգ առաւ ձեռքը դրան  
կանթի վրայ, և մնաց այդպէս այնքան ժամանակ, մինչև որ  
որդին յետ-յետ գնալով ծածկուեց միջանցքի խաւարի մէջ:

Փանը ներս մտաւ իր սենեակը, սիրտն ուրախ և հոգին  
լի խոհերով, որոնք ծնունդ էին առել այդ երեկոյ և խուներամ  
գալիս էին թափով համատարած խաղաղութեան մէջ: Խսկոյն  
քնել չկարողացաւ և բաց արեց լուսամուտը: Սառը հովը փը-  
չում էր կանոնաւրապէս դէպի հիւմիս արևելք: Մառախուղը  
վերացել էր: Իր սենեակից նա կարողանում էր նկատել լեռ-  
նալանջի մշակուած շերտերից աւելի բարձր ընկած անտառնե-  
րը, ուր ստուերը ամբողջ գիշեր ծածկում էր ու բացւում,  
մինչև հաօկաձև լեռնակատարները: Այսաեղ, այնտեղ, լեռները  
պսակուած էին ծառերով, որոնք ընդհատում էին լեռնաշըղ-  
թայի գիծը և թաղում աստղերի մէջ: Նա աշխատում էր որո-  
շել քերի Ուլրիխի տան տեղը և երեակայում էր նրան իր  
տանը մօտենալիս: Յանկարծ անտառի կողմից երգի ձայներ  
լսուեցին: Հաճոյքի մի դող անցաւ երաժշտութեան սիրահար  
երիտասարդի մարմարով: Զայները դուրեկան էին, մատաղ  
ու շիտակ: Անշուշտ մօտ քսան, գուցէ և երեսուն հոգուց բաղ-  
կացած մի խումբ էր երգում: Հեռաւորութեան պատճառով  
բառերը նրանից խուսափում էին, կարծես մի նուազա-  
րանի ձայն լինէր տարածութեան մէջ: Գոռող յանգե-  
րով գերմանական մի երգ էր այն, որ յանձնում էր Ալզա-  
սի քամուն: Յետոյ երեք բառ, պարզ և որոշ հաջուեցին ժա-  
նի ականջին: Նա ուսերը բարձրացրեց զայրանալով իր վրայ,  
որ չկարողացաւ իսկոյն հաօկանալ. Վարժութիւններից վե-  
րաբարձող գերմանական զինուորների մի խումբ էր, հոե-  
նոսեան այն հուսարներից, որոնց պատահել էր լեռներում  
Ուլրիխ Բեհերը: Հստ սովորութեան նրանք երգում էին նախ  
զգաստ մնալու համար, և երկրորդ՝ որովհետև նրանց երգերի  
մէջ կար Հայրենիք խօսքի կորովը: Զիերի տրոփիւնը միանում  
էր երգի եղանակին, որպէս քողապատ թմբուկի ձայն. բառերը  
հաշում էին և թրթռում օդի մէջ:

«Երգեցք ուժեղ, յստակ բարձրաձայն  
Երգեցք երգը բոլոր երգերի.  
Թող արձագանքը սար ու ձորերի  
Կրկնի այդ կսեմ գովքը հայրենի,  
Քեզ ոչ հայրենիք հին երգիշների,  
Ազատ հայրենիք պատուի ու փառքի,

Քաջ, անընկճելի ու ըմբռստ երկիր,

Դարձեալ քեզ համար մենք մեղ կը դոհենք»:

\* Ժանը ինչպէս կը կամենար լրեցնել այդ երգը: Քանի անգամ սակայն գերմանակտն համարեա բոլոր գաւառներում նաև լսել, էր այդ երգը զինուորներից: Ինչո՞ւ համար այժմ, յատկապէս այժմ, նա այդպէս տիրում է նոյն երգի ձայնից, որ ցաւոտ միւում էր նրա հոգու մէջ, չնայելով որ վաղուց հետէ նա գիտէ, նա կարող է անգիր կրկնել այդ երգի բառերը: Աւանից մի երկու հարիւր մետր հեռաւորութեան վրայ նրանք լուցին: Լուում էին միայն ձիերի տրոփինը, որ մօտենում էր Ալճէյմին:

Ժանը կռացաւ տեսնելու համար, թէ նրանք ինչպէս են մտնում աւանը: Նա կարողացաւ նրանց տեսնել պարտիզի պատի վրայ շինուած մի ցանցապատ բացուածքից, որ գտնում էր տանից մի փոքր հեռու: Նրա աշքի առաջից անցնում էր շարժուն զանգուածը մոխրագոյն փոշու մէջ, որ քամին տանում էր զէպի յետ, կամ ծոռում էր նրանց գլուխների վրայ, ինչպէս հասկի կռացած քիստը: Մարդիկ իրարից չեին զանազանում, ինչպէս և նրանց ձիերը: Ժանը յարաճուն վշտով մտածում էր իր հոգու խորքում. «Ե՞նչ բազմաթիւ են նրանք»: Թերլինում, Մինսկինում, Հայդելբերգում նրանք անմիջական նպատակից զուրկ մի ոյժի միտք էին միայն յարուցանում: Թշնամին որոշ չէր. գերմանական կայսրութեան մեծութեանը դէմ կեցողն էր թշնամին, ով և լինէր նա: Ժան Օբերլին շատ անգամ էր հիացել շարժուող գնդերի շարքերի և այն անձի զարհուրելի կարողութեան վրայ, որ հրամայում էր այդքան մարդկանց: Բայց այստեղ՝ սահմանի վրայ, վերջին պատերազմի արինից դեռ մխացող հողի վրայ, յիշատակներ կային, որոնք պարզ ցոյց էին տալիս, թէ մեմ են սպառնում, ում են ուզում հարուածել: Զինուորների տեսքը կամ աղմուկը մտածել էր տալիս սպանութիւնների, մահուան, զարհուրելի սպի մասին, որ գեռ իշխում էր: Նրանք անցնում էին տների արանքից: Զիերի և մարդկանց շարքերի աղմուկը զարկում էր լուսամուտներին: Աւանը թւում էր ընած: Ո՛չ զինուորները և ոչ սպաները բան չնկատեցին, բայց շատ տներում մայրեր կային, որոնք զարթեցին և ցցուեցին անկողնի մէջ դողդողալով. մի մարդ բռունցքը մեկնեց և նզովեց անցեալում յաղթողներին: Դրաման տեսաւ միայն Աստուած: Եւ նրանք անցան:

Երբ վերջին շարքի ստուերը վերացաւ ցանցապատ անցքի առջի ճանապարհից՝ Ժանը նկատեց իջնող փոշու մէջ մի

ձիաւոր՝ որ երեսը դարձրել էր դէպի իրանց տունը։ Արդեօք ձին էր իրանել և չէր առաջանում. բայց ոչ նա հանգիստ էր։ Ձիաւորը մի սպայ էր։ Կրծքին ինչ որ ոսկեզօծ բաներ մի քանի շարքով փայլվում էին։ Թամբի վրայ լաւ նստած, երիտասարդ, բարձրահասակ՝ այդ սպան չէր շարժւում և նայում էր առաջ։ Այդ տևեց հազիւ մի բովէ։ Յետոյ նա ցած թողեց սուրը, որ բռնած էր ձեռքին, ապա ողջունելով՝ խթեց ձիու կողերը և առաջ սլացաւ։

Այս տեսարանը այնպիսի արագութեամբ կատարուեց, որ ժանը ինքն իրան կը կարծէր աչքի պատրանքի զոհ, եթէ դէպի գունդը արշաւող ձիու ոտնաձայնը չլսուէր գիւղի փողոցներում։

«Ճետոնական մի կատակ, մտածեց Ժանը, այս սպան երկի այդ միջոցն էր գտել ասելու, թէ տունը նրան դուր է դալիս։ Շատ շնորհակալ ենք»։

Գունդը արդէն գիւղից դուրս էր և անցնում էր հովտի միջից։ Տները վերստին նիշնեցին։ Հովը փչում էր դէպի կանաչապատ Վոժերը։ Հակառակ կողմում, արդէն հեռուից, որպէս մի կրօնական օրէներգ, վերստին հնչեց գերմանական զինուորների երգը, որոնք փառարանում էին իրանց հայրենիքը, դիմելով դէպի Սարազրուրդ։

(Կը շարունակուի)